ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիս, 2021 թվականի N 15-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2021 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 13:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ բաժնետոսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելու և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ բաժնետոսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելու և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրերի՝ 2021 թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:

4. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության լսողական ծրագրերի՝ 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
5. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության տեսալսողական ծրագրի՝ 2021 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
6. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Նորք գովազդային գործակալություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մասնակցության վերաբերյալ հարցերով որոշումների ընդունման իրավասությունը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնին փոխանցելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

28 հունիս, 2021 թվական
ք. Երևան